

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների (ՀՌԿԿ) Տվյալների նախաձեռնություն ծրագրով 2006թ. իրականացված ընտրանքային հետազոտության որոշ արդյունքներ

Պատվիրատու. ՀՌԿԿ-Հայաստան
Կատարող. Արմեն Ասատրյան՝ համագործակցաբար
ՀՌԿԿ-Հայաստանի անձնակազմի հետ
Ամսաթիվ. 14-ը նոյեմբերի, 2006թ.

Սլայդ #2:

Այս ներկայացման համար կիրառված տվյալների հիմք են ծառայել ՀՌԿԿ կողմից հավաքագրված և կազմված երեք առանձին տվյալների բազաները.

- 1) 2004թ. տվյալներ՝ Հարավային Կովկասի (ՀԿ) երեք մայրաքաղաքներում բնակվող քաղաքացիների և տնային տնտեսությունների (SS) սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի և կենսամակարդակի վերաբերյալ: Երևանում, Թբիլիսիում և Բաքվում հարցվել են 4461 ռեսպոնդենտներ;
- 2) 2005թ. տվյալներ երեք մայրաքաղաքներում, ինչպես նաև Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մեկական շրջանում (Կոտայք, Արան-Մուղան և Շիրա քարթլի՝ համապատասխանաբար) բնակվող քաղաքացիների և SS սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի և կենսամակարդակի վերաբերյալ: Հարցումներն իրականացվել են 4500 տնտեսություններում;
- 3) 2006թ. տվյալներ՝ երեք մայրաքաղաքներում, ինչպես նաև Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի բոլոր շրջաններում բնակվող քաղաքացիների և նրանց SS ապրելակերպի վերաբերյալ: Երեք երկրներում հարցվել են ավելի քան 6800 ռեսպոնդենտներ:

2004-2006թթ. համեմատական վերլուծության նպատակով այս երեք տվյալադարանները միացվել են:

Սույն վերլուծության առաջին բաժնում ներկայացված են ուսումնասիրված SS բոլոր անդամների մասին ստացված տեղեկությունները, իսկ երկրորդում՝ տվյալներ հարցվածների վերաբերյալ:

1. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒՈՐ ԱՆՂԱՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սլայդ #4. Բնակչության միջին տարիքն ըստ երկրների (տարի)

Հարավային Կովկասում բնակչության միջին տարիքը տատանվում է 31.2 տարեկանից (Ադրբեջանի գյուղական վայրերում) մինչև 37.8 տարեկան (Վրաստանի գյուղական վայրերում): Առհասարակ, Ադրբեջանի բնակչությունը Հարավային Կովկասի հանրապետությունների մեջ ամենաերիտասարդն է, իսկ Վրաստանինը՝ ամենատարեցը: Հայաստանում, Երևանի բնակչության միջին տարիքը (37.1 տարի) ավելի բարձր է, քան մարզերինը:

Սլայդ #5. Հայաստանի բնակչության սեռատարիքային կառուցվածքը (% ամբողջի մեջ)

Բնակչության բաշխվածությունն ըստ սեռատարիքային խմբերի ցույց է տալիս, որ մինչև 18 տարեկանների մեջ գերակշռում են տղամարդիկ: Սակայն, այս հարաբերակցությունն աստիճանաբար փոխվում է հոգուտ կանանց: Այսպես, 61 և ավելի տարեկան կանանց բաժինը տատանվում է 56.4%-ից (գյուղական վայրերում) մինչև 60.1% (Երևանում):

Սլայդ #6: 18 և ավելի տարեկան անձանց կրթամակարդակը (% ամբողջի մեջ)

Բոլոր երեք երկրներում մայրաքաղաքների բնակիչները, այլ շրջանների բնակիչների համեմատությամբ, կրթական առավել բարձր մակարդակ ունեն: Դեռ ավելին, մյուս հանրապետությունների համեմատությամբ, բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթությամբ վրաստանցի հարցվածների ցուցանիշն ամենաբարձրն է (49%՝ համեմատած Հայաստանի 42% և Ադրբեջանի 26%-ի հետ):

Սլայդ #7: Վերջին 3 տարիներին առնվազն 3 ամսով արտասահմանում բնակված անդամ ունեցող տնային տնտեսությունները (% ամբողջի մեջ)

Վերջին երեք տարիներին արտագաղթած անդամ ունեցող տնային տնտեսությունների ամենամեծ մասնաբաժինը գրանցվել է Հայաստանում, իսկ ամենափոքրը՝ Ադրբեջանում:

Հայաստանից արտագաղթածների ամենամեծ հոսքն այլ քաղաքներից է (12.1%): Բաքվի տնային տնտեսությունների միայն 0.3%-ում են եղել արտագաղթածներ:

Սլայդ #8: Արտագաղթի երկրներ (% արտագաղթածների մեջ)

Ռուսաստանը Հայաստանից և Ադրբեջանից արտագաղթողների նպատակակետ հանդիսացող հիմնական երկիրն է: Ուշագրավ է, որ Թբիլիսիից արտագաղթողների մեծամասնությունը (41%) մեկնում է Եվրոպա, և միայն 31%-ը՝ Ռուսաստան: ԱՄՆ-ը որպես նպատակակետ Հայաստանի այլ վայրերի համեմատ ավելի հաճախ ընտրում են երևանաբնակները (20%): Բոլոր երեք երկրներում արտագաղթի հարցերում աջակցող հիմնական դերակատարները մասնավոր անձինք են կամ նման դերակատարներ չկան:

Սլայդ #9: Հայրենիքից մեկնելու դրդապատճառները (16-ից բարձր տարիքի միգրանտների մեջ, %)

Հայաստանից արտագաղթելու հիմնական պատճառը տնտեսական գործոնն է. շատերին չի հաջողվել աշխատանք գտնել, ոմանց ստացած վաստակը չի բավարարել իրենց տնտեսության ապրուստը հոգալուն, իսկ մյուսները մատնանշել են իրենց որակավորմանը համապատասխան աշխատանք չլինելը:

Սլայդ #10: Արտագաղթողների զբաղմունքը արտագաղթից առաջ և դրա ընթացքում (16-ից բարձր տարիքի միգրանտների մեջ, %)

Բոլոր երեք երկրներում էլ արտագաղթածների զգալի մասը մինչև արտագաղթելը աշխատանք չի ունեցել: Հետաքրքրական է արտերկրում գտնվելիս աշխատանքային ուղիների հետագծերի տարբերությունը. այսպես, հայերի 74%-ը դարձել է վարձու աշխատող մասնավոր հատվածում, ադրբեջանցիների 63 տոկոսը՝ ինքնազբաղված, մինչդեռ վրացիները զբաղմունքի ընդգծված նախապատվություններ չունեն:

2. ՀԱՐՑԱԾՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սլայդ #12: Քաղաքացիական կարգավիճակը (% ամբողջի մեջ)

Հայաստանում և Ադրբեջանում հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (ավելի քան 60%) ամուսնացած են և ապրում են ամուսնու/կնոջ հետ, մինչդեռ ամուսնու/կնոջ հետ Թբիլիսիում և Վրաստանի այլ քաղաքներում ապրողների մասնաբաժինը բավականին ցածր է և գրեթե նույնական «քաղաքացիական ամուսնությամբ» միասին ապրողների մասնաբաժինն (~30%):

Սլայդ #13: Ներկայիս զբաղվածությունը (% ամբողջի մեջ)

Երևանաբնակների զբաղվածությունն ունեցել է հետևյալ պատկերը. շուրջ 14%-ը զբաղված են մասնավոր հատվածում (թեև մասնավոր հատվածն ապահովում է ՀՆԱ-ի ավելի քան 80%-ը), 18%-ը՝ հանրային հատվածում, 5%-ն իր ապրուստն ապահովում է ինքնազբաղվածությամբ, 23%-ը թոշակառուներ են (ներառյալ հաշմանդամները), և մնացած 23%-ն ունեն այլ զբաղվածություն:

Պատկերը գրեթե նույնն է այլ քաղաքներում, սակայն գյուղական վայրերում գերակշում են ինքնազբաղվածները (39%):

Սլայդ #14: Զբաղվածության դինամիկան Երևանում (% ամբողջի մեջ)

Երևանաբնակների բաշխվածությունն ըստ զբաղմունքի տեսակի վերջին 3 տարիներին էական փոփոխություններ չի կրել: Այդուհանդերձ, գործազուրկների բաժինը 2004թ. շուրջ 19% -ից, 2005-ին իջել է մինչև 11% և 2006թ. կրկին աճել մինչև 15%:

Սլայդ #15: Գործազուրկներն ըստ տարիքային խմբերի (գործազուրկների ընդհանուր թվում, %)

Հայաստանում գործազուրկների զգալի մասը (41%-ը) 18-30 տարեկան երիտասարդներ են, մինչդեռ երևանաբնակ գործազուրկների մոտ 40 տոկոսը 46-60 տարեկան են:

Սլայդ #16: Զբաղվածության գործակալություններում չգրանցված գործազուրկները (% բոլոր գործազուրկների մեջ)

Հայաստանի գործազուրկների շուրջ 85%-ը գրանցված չէ զբաղվածության պետական և/կամ մասնավոր գործակալություններում: Թե՛ Երևանում, և թե՛ այլ քաղաքներում զբաղվածության գործակալություններում չեն գրանցվել գործազուրկների մոտ 81%-ը, մինչդեռ գյուղական վայրերում 95%-ը:

Սլայդ #17: Կրթական հաստատություն հաճախող կամ տարբեր ուսուցողական դասընթացներում ընդգրկվածությունը (% ամբողջի մեջ)

Կրթական հաստատություններում և դասընթացներում ընդգրկվածությունը Հարավկովկասյան երկրներից ամենաբարձրը Հայաստանում է եղել: Ուշագրավ է այն փաստը, որ Հայաստանի քաղաքային և գյուղական բնակչության ընդգրկվածության աստիճանը կրթական գործընթացներում քիչ է տարբերվում, մինչդեռ Բաքվում ուսումնակրթական ծրագրերում ներգրավվածների բաժինը հինգ անգամ գերազանցում է Ադրբեջանի գյուղաբնակների համապատասխան ցուցանիշը (4% և 0,8%, համապատասխանաբար):

Սլայդ #18: Կրթական ծրագրում ներգրավվելու որոշումը կայացնողը (% սովորողների մեջ)

2006թ. Հայաստանում հարցվածների գերակշիռ մասը կրթություն ստանալու որոշումն ինքնուրույն է կայացրել, սակայն, գյուղական վայրերի և այլ քաղաքների բնակիչները խորհրդակցել են ծնողների հետ և/կամ հետևել նրանց կայացրած որոշումներին:

Սլայդ #19: Կրթություն ստանալու հիմնական դրդապատճառներն ըստ սեռերի (% սովորողների մեջ)

Թեև կրթություն ստանալու հիմնական շարժառիթների մեջ Հայաստանյան ռեսպոնդենտները 2006թ. ամենից ավելի հաճախ նշել են սերն ընտրած մասնագիտության նկատմամբ, կրթության շնորհիվ հաջող կարիերա անելու ակնկալիք ունեն երևանաբնակ թե՛ տղամարդկանց, և թե՛ կանանց զգալի մասը (համապատասխանաբար 57% և 43%-ը):

Սլայդ #20: Կրթություն ստանալու դրդապատճառների դինամիկան Երևանում (% սովորողների մեջ)

Հետազոտությունը ցույց է տալիս, որ Երևանում մասնագիտական զարգացմանը հետամուտ լինելու շարժառիթները նույնիսկ կարճ ժամանակի ընթացքում նկատելիորեն փոխվել են: Պարզապես դիպում ստանալ ցանկացողների բաժինը 2004թ. 14%-ի դիմաց 2006թ. կազմել է ընդամենը 7%, մինչդեռ հանրապետությունում հաջող կարիերա ունենալու ակնկալիքով անձանց տեսակարար կշիռը 2004թ. 27%-ի դիմաց 2006թ. աճել է մինչև 47%:

Սլայդ #21: Հայաստանում լավ աշխատանք գտնելու կարևորագույն գործոնը (% ամբողջի մեջ)

Հայաստանում լավ աշխատանք գտնելու կարևորագույն գործոնների շարքում նշվել են անձնական կապերը, կրթությունը, մասնագիտական կարողությունները, աշխատասիրությունը և փողը: Երևանում 2004-2006թթ. գրանցված պատասխանները էական փոփոխություններ չեն կրել. 2006թ. հարցվածների 43%-ը անձնական կապերն են համարում Հայաստանում լավ աշխատանք գտնելու ամենածանրակշիռ գրավականը, 16%-ը վճռորոշ դեր է վերապահում կրթությանը, իսկ 12%-ը՝ մասնագիտական կարողություններին և հմտություններին:

Սլայդ #22 և #23: Հայաստանում կանոնավորապես ծխողներն ըստ տարիքային խմբերի և ըստ սեռերի (% ամբողջի մեջ)

#22. Նախկինում և այժմ Հայաստանում կանոնավորապես ամենից ավելի շատ ծխում են գյուղական վայրերի 31-ից 60 տարեկանները: Հետաքրքիր է, որ համարյա բոլոր տարիքային խմբերում էլ, բացառությամբ 18-30 տարեկանների, երևանաբնակներն ավելի քիչ են ծխում:

#23. Ծխողներին ըստ սեռերի տարաբաշխելու դեպքում ստացվում է, որ կանոնավորապես ծխում են հայաստանցի տղամարդկանց 61% և կանանց ընդամենը 2%-ը: Երևանում ծխում են կանանց 4%-ը, իսկ գյուղական վայրերում ծխող կանայք գրեթե չկան: Տղամարդկանց դեպքում պատկերը հակառակն է. գյուղական վայրերում ծխողների բաժինը գերազանցում է մայրաքաղաքի համապատասխան ցուցանիշը:

Սլայդ #24: Կանոնավորապես ծխողները Հարավկովկասյան մայրաքաղաքներում (% ամբողջի մեջ)

Նախկինում և այժմ կանոնավոր ծխողների բաժինը վերջին երեք տարվա ընթացքում նվազել է Երևանում և Թբիլիսիում, իսկ Բաքվում այն աճել է (2006թ. կազմելով 24%):

Սլայդ #25: Առողջապահական ծառայությունների կարիքն ու մատչելիությունը 2006թ., ըստ երկրների (% ամբողջի մեջ)

Վերջին 12 ամսվա ընթացքում բժշկական ծառայությունների կարիք են ունեցել տարածաշրջանի բնակչության 42 %-ից (Բաքու և Թբիլիսի) մինչև 63%-ը (Երևան): Սակայն, բժշկի կարիք ունեցողները Հայաստանում, վրացիների և ադրբեջանցիների համեմատությամբ, ավելի քիչ են դիմել բժշկական կամ պրոֆիլակտիկ օգնություն ստանալու համար:

Սլայդ #26: Հետաքրքրվածությունը քաղաքականությամբ (% ամբողջի մեջ)

Հարավային Կովկասում քաղաքականությամբ խիստ հետաքրքրվում են չափահասների 8%-ը, իսկ ընդհանրապես չեն հետաքրքրվում մոտ 35%-ը: Սակայն այդ հարաբերակցությունը բավական տարբերվում է ըստ երկրների և բնակավայրերի: Այսպես, Բաքվում, Ադրբեջանի այլ քաղաքներում և գյուղական շրջաններում քաղաքականությամբ ընդհանրապես չեն հետաքրքրվում բնակչության 47%, 37% և 48%-ը, համապատասխանաբար: Հայաստանի գյուղաբնակների 39%-ը ևս բնավ չի հետաքրքրվում քաղաքականությամբ: Երևանում քաղաքականությամբ խիստ հետաքրքրվում է յուրաքանչյուր ութերորդ չափահասը (13%) և առհասարակ չի հետաքրքրվում 23%-ը: Վրաստանում քաղաքականությամբ խիստ հետաքրքրվողների և ընդհանրապես չհետաքրքրվողների բաժինը համեմատաբար քիչ է շեղվում (13 և 19%, համապատասխանաբար):

Սլայդ #27: Հետաքրքրվածությունը քաղաքականությամբ ըստ տարիների (% ամբողջի մեջ)

Հետազոտության տվյալներով բացահայտվել է, որ վերջին երեք տարիներին, թե՛ Հայաստանում, և թե՛ Վրաստանում ու Ադրբեջանում նվազել է հետաքրքրությունը քաղաքականության նկատմամբ: Այսպես, քաղաքականությամբ շատ հետաքրքրվողների բաժինը Երևանում և Բաքվում 2004-2006թթ. նվազել է 6, իսկ Թբիլիսիում՝ 8 տոկոսային կետով:

Սլայդ #28. Մասնակցությունը խորհրդարանական/նախագահական ընտրություններին (% ամբողջի մեջ)

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ վերջին խորհրդարանական և նախագահական ընտրություններին գյուղաբնակներն ավելի ակտիվ են մասնակցել, քան մայրաքաղաքների բնակիչները: Այդուհանդերձ, Ադրբեջանում մասնակցությունն ամենաբարձրն է եղել, իսկ Հայաստանում՝ ամենացածրը:

Սլայդ #29. Հարավային Կովկասի երկրների տնտեսական/ քաղաքական փոխհամագործակցության տրամադրությունները (% ամբողջի մեջ)

Վրաստանի բնակիչները Հայաստանի հետ համագործակցությանը շատ ավելի դրական են տրամադրված, քան Հայաստանի բնակիչները Վրաստանի հետ համագործակցությանը: Վրաստանում հարցվածների 76.5% -ը (2005թ.՝ 84%-ը) կողմ են և/կամ լիովին կողմ են Հայաստանի հետ տնտեսական, իսկ 70.2%-ը (2005թ.՝ 80%)՝ քաղաքական համագործակցությանը: Հայաստանում հարցվածների միայն 47.4%-ն (2005թ.՝ 55%) են ավելի շուտ կողմ և/կամ լիովին կողմ Վրաստանի հետ տնտեսական, և 43%-ը՝ քաղաքական համագործակցությանը (2005թ.՝ 54%):

Միևնույն ժամանակ, տրամադրվածությունը Ադրբեջանի հետ համագործակցելուն Հայաստանում շատ ավելի դրական է, քան ադրբեջանցիներին՝ Հայաստանի հետ համագործակցությանը: Այսպես, Հայաստանում հարցվածների 24%-ը (28.5% նախորդ տարում) ավելի շուտ կողմ են և/կամ լիովին կողմ են Ադրբեջանի հետ տնտեսական, իսկ 29.4%-ը (32.6% նախորդ տարում)՝ քաղաքական համագործակցությանը, սակայն ադրբեջանցիների համապատասխանաբար 93%-ը և 92%-ը լիովին դեմ են Հայաստանի հետ տնտեսական և քաղաքական համագործակցությանը (նախորդ տարվա 75% և 72%-ի դիմաց):

Սլայդ #30: Վերաբերմունքը ՆԱՏՕ-ին անդամակցելուն (% ամբողջի մեջ)

Հարավկովկասյան երկրներում ՆԱՏՕ-ի անդամ դառնալու հեռանկարի վերաբերյալ կարծիքները բավականին տարբեր են: Վրաստանում և Ադրբեջանում զգալիորեն բարձր է ՆԱՏՕ-ին անդամակցելու հեռանկարին միանշանակ կողմ արտահայտվողների բաժինը՝ այդ հեռանկարին կտրականապես դեմ արտահայտվողների բաժնի համեմատ: Հայաստանում, սակայն, ՆԱՏՕ-ին անդամակցելու հեռանկարին միանշանակ դեմ արտահայտվողների բաժինը զգալիորեն գերազանցում է դրան միանշանակ կողմ արտահայտվողների բաժնին: Հարկ է նաև նշել, որ վերջին երկու տարվա ընթացքում երևանաբնակների և Թբիլիսիի բնակիչների շրջանում ՆԱՏՕ-ին անդամակցելու հեռանկարին միանշանակ կողմ արտահայտվողները նկատելիորեն պակասել են. համապատասխանաբար 19%-ից մինչև 10%, և 65%-ից մինչև 47%:

Սլայդ #31: Վստահությունը խորհրդարանի/նախագահի նկատմամբ (% ամբողջի մեջ)

Բոլոր երեք երկրներում էլ նախագահները, խորհրդարանների համեմատությամբ, առավել մեծ վստահություն են վայելում: Խորհրդարանի նկատմամբ անվստահություն են տածում հատկապես հայաստանցիները. այստեղ խորհրդարանին չեն վստահում 61%-ից (գյուղական վայրերում) մինչև 68%-ը (Երևանում): Բոլոր երեք երկրներում էլ, քաղաքաբնակների համեմատությամբ, գյուղաբնակներն առավել մեծ վստահություն ունեն իրենց նախագահի նկատմամբ:

Սլայդ #32: Վստահությունը նախագահների նկատմամբ (միջին գնահատականը, բալ)

Վերջին երկու տարվա ընթացքում զգալի անկում է գրանցվել նախագահի նկատմամբ Թբիլիսիի բնակիչների ունեցած վստահության գնահատականում: Մասնավորապես, միջին գնահատականը 2004թ. գրանցված 4.4 միավորից նվազել է մինչև 2006թ. 3.1 միավորը: Նախագահի նկատմամբ վստահության միջին գնահատականը Երևանում 2004թ. 2.6 միավորից 2005-ին հասել է 2.9 միավորի, և 2006-ին կրկին նվազել մինչև 2.7 միավորը: Մինչդեռ, Ադրբեջանի նախագահի նկատմամբ վստահությունն ավելացել է՝ 2006թ. հասնելով 4.2 միավորի, նախորդ տարվա 3.8-ի դիմաց:

Սլայդ #33: Վստահությունը նախագահի նկատմամբ ըստ մարզերի (միջին գնահատականը, բալ)

Հայաստանի տարբեր շրջաններում նախագահի նկատմամբ վստահության գնահատականների մեծ տարբերություններ են նկատվում: Վստահության ամենաբարձր աստիճանը գրանցվել է Տավուշի մարզում (3.9), իսկ վստահության ամենացածր աստիճանը գրանցվել է Երևանում, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում (2.7-ական միավոր՝ յուրաքանչյուրում):

Սլայդ #34: Անդամակցությունը քաղաքական կուսակցությանը (% ամբողջի մեջ)

Հայաստանում և Ադրբեջանում, Վրաստանի համեմատությամբ, քաղաքական կուսակցություններին անդամակցող անձանց բաժինը նկատելիորեն ավելի մեծ է: Հայաստանում և Ադրբեջանում քաղաքական կուսակցություններին անդամակցող անձանց բաժինն անհամեմատ բարձր է այլ քաղաքներում՝ գյուղական համայնքների և նույնիսկ մայրաքաղաքների համեմատությամբ: Երևանում հարցվածներից 2004թ. քաղաքական կուսակցությունների են անդամագրված եղել 2.7%-ը, 2005թ.՝ 1.9%, իսկ 2006թ.՝ 5.6%-ը:

Սլայդ #35: Տարբեր ինստիտուտների կողմից բռնության զոհ դառնալու հավանականությաունը (% ամբողջի մեջ)

Բոլոր երեք երկրներում էլ հարցվածների մեծ մասն իրենց ընտանիքը բռնության տեսանկյունից խիստ խաղաղ միջավայր են համարում: Այլ քաղաքների և գյուղական համայնքների բնակիչների առավել մեծ հատվածն է ոստիկանության կողմից բռնության ենթարկվելու հեռանկարը խիստ հավանական համարում՝ կազմակերպված հանցագործության կողմից բռնության հեռանկարի համեմատությամբ:

Սլայդ #36: Սեփական ապաստանի (բնակարանի կամ տան) առկայությունը (% ամբողջի մեջ)

Բոլոր երեք երկրներում տնային տնտեսությունների մեծ մասն իր առանձին բնակարանը կան տունն ունի: Երեք մայրաքաղաքներից իր առանձին ապաստանն ունեցող ընտանիքների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Երևանում (98%), իսկ ամենացածրը՝ Թբիլիսիում (72%):

Սլայդ #37: Ունեցվածքի որոշ առարկաների առկայությունը տնային տնտեսություններում (% ամբողջի մեջ)

Հարավկովկասյան մյուս մայրաքաղաքների համեմատությամբ, Բաքվի բնակիչները կան նախընտրում են իրենց սեփական մեքենան չունենալ, կան ի վիճակ չեն գնել սեփական մեքենա: Համակարգիչներով հագեցվածության մակարդակը տատանվում է 2%-ից (Վրաստանի գյուղական համայնքներում) մինչև 26% (Թբիլիսիում): Հարավային Կովկասի գյուղական համայնքներում բջջային հեռախոս ունեցող տնային տնտեսությունների բաժինն ամենաբարձրն է Հայաստանում (39%), իսկ ամենացածրը՝ Ադրբեջանում (29%):

Հարկ է նշել, որ առնվազն մեկ բջջային հեռախոս ունեցող տնային տնտեսությունների թիվը կտրուկ աճել է 2004-2006թթ. ժամանակահատվածում: Այս ժամանակահատվածում բջջային հեռախոս ունեցող երևանաբնակ տնտեսությունների բաժինն աճել է 23.4%-ից մինչև 60%:

Սլայդ #38: Ընտանեկան եկամտի աղբյուրները (% ամբողջի մեջ)

Հիմնական աշխատավայրից ստացված եկամուտը Հայաստանի քաղաքներում բնակվող տնտեսությունների եկամտի հիմնական աղբյուրն է: Գյուղաբնակների եկամտի երկու զլխավոր աղբյուրներն են գյուղատնտեսական զործունեությունից ստացված եկամուտը (52%) և հիմնական աշխատավայրից ստացված եկամուտը (34%):

Սլայդ #39: Տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական կարգավիճակը (% ամբողջի մեջ)

Բոլոր երեք երկրներում էլ իրենց տնային տնտեսությունը հասարակության ամենաստորին խավին ավելի հաճախ են դասել գյուղական համայնքներում, և ապա՝ այլ քաղաքներում: Հայաստանաբնակների մեծամասնությունն իր տնտեսության նյութական կացությունը համարում է բավարար: Ավելին, ադրբեջանցիների և վրացիների համեմատությամբ, հայաստանցիների առավել ստվար զանգվածն է իր տնտեսության նյութական կացությունը համարում բարվոք

Սլայդ #40: Հարցվածների կարծիքը վերջին երեք տարիներին իրենց տնային տնտեսության տնտեսական վիճակում տեղ գտած փոփոխությունների մասին (% ամբողջի մեջ)

Հայաստանում իրենց տնտեսությունների կենսամակարդակում վերջին 3 տարիներին դրական փոփոխություններ տեսնողների բաժինը տատանվում է 35%-ից (Երևանում) մինչև 40.4% (այլ քաղաքներում): Հայաստանի և Ադրբեջանի բնակիչների համեմատությամբ, վրաստանաբնակների ավելի փոքրաթիվ հատվածն է իր տնտեսության կենսամակարդակում դրական փոփոխություններ տեսնում: